# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի «Շիկահողի միջնակարգ դպրոց», «Ծավի միջնակարգ դպրոց», «Ներքին Հանդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ Շիկահողի միջնակարգ դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,

2. Բարձրագույն կրթությունը,

3. Ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր),

4. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),

3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),

4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,

5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. հոկտեմբերի 17-ից մինչև 2022 թ. նոյեմբերի 4-ը ամենօր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Շիկահողի միջնակարգ դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. նոյեմբերի 18-ին՝ ժամը 13:30-ին, ՀՀ Սյունիքի մարզի Շիկահողի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Սյունիքի մարզ, գ. Շիկահող:

Տեղեկությունների համար զանգահարել 093-35-08-70 հեռախոսահամարին, էլ.հասցեն՝shikahogh@schools.am:

Միացյալ խորհրդի նախագահ՝ Ա. Մովսիսյան